ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
30.09.2024 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՏԱԶԳՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝			
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՏԱԶԳՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ»	
1.2 ՀՎՀՀ-ն		01820284	
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱԲՈՎՅԱՆ Փ. 9	
1.4 Պետական գրանցման համարը		211.171.02454	
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		1993-05-13	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94775002	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը			
1.8 Էլեկտրոնային փոստը		serine@smaccounting.am	
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝			
Անունը	Ազգանունը	Պաշտոնը	
ՆԱԶԻԿ	ԱՄԻՐՅԱՆ	Նախագահ	
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը			
Կազմակերպության նպատակներն են՝ օրենքով սահմանված կարգով.			
1.Նետաձգության զարգացումը Հայաստանում,առողջ ապրելակերպի համակարգում մարզաձևի տեսակարար կշռի մեծացումը, մարզաձևի տարածմանը նպաստող ձևերի կատարելագործումը,			
2.Նետաձգության մրցումների կազմակերպումը և անցկացումը,			
3.Բարձրակարգ մարզիկների և նրանց փոխարինողների պատրաստման մեթոդների կատարելագործումը,Օլիմպիական խաղերի,Աշխարհի և Եվրոպայի առաջնություններին,ինչպես նաև միջազգային մրցումներին կազմակերպության մարզիկների մասնակցության ապահովումը,			
4.Ռեգիոնալ, հանրապետական, արտասահմանյան և միջազգային մարզական կազմակերպությունների/կազմակերպություններ, ակումբներ, ֆիրմաներ և այլ կազմակերպություններ/ հետ մարզական կապերի հաստատում և համագործակցումը,			
5.Նետաձգության մասնագետների որակավորման բարձրացումը,			
6Մրցումների մասնակցության և անցկացման կանոնակարգի հաստատում:			
4 Հասարակական կազմակերպության՝			
4.1 Անդամների թիվը		40	
4.2 Կամավորների թիվը			
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		4	

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Նետաձգության Եվրոպայի առաջնություն դահլիճում	Թուրքիա, ք. Սամսուն	Կազմակերպել նետաձգության Եվրոպայի առաջնություն դահլիճում	Ավարտված
2	ՀՀ նետաձգության առաջնություններ	ՀՀ, ք. Երևան	ՀՀ նետաձգության առաջնությունների անցկացում	Ավարտված
3	Նետաձգության Աշխարհի առաջնություն	Գերմանիա, ք. Բեռլին	Նետաձգության Աշխարհի առաջնության կազմակերպում	Ավարտված
4	Նետաձգության միջազգային առաջնությունների անցկացում	Վրաստան, ք. Բաթումի	նետաձգության միջազգային առաջնությունների անցկացում	Ավարտված
5	Նետաձգության ԱՊՀ երկրների 2-րդ մարզական խաղեր	Բելառուսիա, ք. Մինսկ	Նետաձգության ԱՊՀ երկրների 2-րդ մարզական խաղերի անցկացում	Ավարտված

Digitally signed by MOVSISYAN VALERI 2803910055
Date: 2024.10.08 18:07:26 AMT

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	Նետաձգության Եվրոպայի առաջնություն դահլիճում	Թուրքիա, ք. Սամսուն	Ավարտված	Կազմակերպել նետաձգության Եվրոպայի առաջնություն դահլիճում	դրական
2	ՀՀ նետաձգության ձմեռային առաջնություն	ՀՀ, ք. Երևան	Ավարտված	ՀՀ նետաձգության առաջնության անցկացում	դրական
3	ՀՀ նետաձգության առաջնություն	ՀՀ, ք. Երևան	Ավարտված	ՀՀ նետաձգության առաջնության անցկացում	դրական
4	ՀՀ նետաձգության պատանիների առաջնություն	ՀՀ, ք. Երևան	Ավարտված	ՀՀ նետաձգության պատանիների առաջնության կազմակերպում	դրական
5	Նետաձգության Աշխարհի առաջնություն	Գերմանիա, ք. Բեռլին	Ավարտված	Նետաձգության Աշխարհի առաջնության կազմակերպում	դրական
6	28-րդ նետաձգության միջազգային առաջնություն	Վրաստան, ք Բաթումի	Ավարտված	28-րդ նետաձգության միջազգային առաջնության անցկացում	դրական
7	Նետաձգության ԱՊՀ երկրների 2-րդ մարզական խաղեր	Բելառուսիա, ք. Մինսկ	Ավարտված	Նետաձգության ԱՊՀ երկրների 2-րդ մարզական խաղերի անցկացում	դրական
8	Նարիմանիդզեի պատվին նետաձգության միջազգային առաջնություն	Վրաստան, ք. Բաթումի	Ավարտված	Նարիմանիդզեի պատվին նետաձգության միջազգային առաջնության անցկացում	դրական

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	23,567,868
8.2 Գույքը	
Ընդամենը	23,567,868

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	13,203,934	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	13,203,934	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները		23,567,868
10.2 Գույքը		
Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		23,567,868

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները		13,203,934
11.2 Գույքը		
Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		13,203,934

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	Համագործակցության պայմանագրի շրջանակում մրցաշարերի կազմակերպում	1,000,000	Կանոնադրական նպատակներով
2	Մրցաշարերի մասնակցության վճար	9,363,934	Կանոնադրական նպատակներով
Ընդամենը		10,363,934	

Նշումներ

Ձեզ ենք ուղարկում նաև Կանոնադրության <<Կազմակերպության նպատակները և խնդիրները>> բաժինը PDF տարբերակով: Դրամական միջոցները օգտագործվել են կանոնադրական նպատակներին համապատասխան:

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____5_____ էջից

էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____
ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրություն, անունը, ազգանուն

audit pro

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՏԱԶԳՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2023թ. գործունեության մասին հաշվետվություն, որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն և Անկախ աուդիտորական եզրակացություն

ԵՐԵՎԱՆ
Հոկտեմբեր 2024թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
2023թ. ՀԿ գործունեության վերաբերյալ հաշվետվություն	6
Հաշվետվությանը կից ծանոթագրություններ	
1. Կազմակերպության նկարագիրը և գործունեությունը	9
2. Կառուցվածք	9
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր	9
4. Ֆինանսական հաշվետվությունների վավերացումը	10

audit pro

Աուդիտ Պրո ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան
Եղբայրության 8/16

+37412 222322
www.auditpro.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՏԱԶԳՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» հասարակական կազմակերպության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՏԱԶԳՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) 2023թ. գործունեության մասին հաշվետվությունը՝ որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը և այլ բացատրական ծանոթագրությունները (այսուհետ միասին՝ Ֆինանսական հաշվետվություններ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Կազմակերպության ղեկավարության կողմից՝ կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքը (բացառությամբ 12-րդ կետում նշված տեղեկատվության), որը նկարագրված է ծանոթագրություն 3-ում:

Մեր կարծիքով, Ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՏԱԶԳՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» հասարակական կազմակերպության 2023թ. դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2020թ. մայիսի 27-ի N 477-Ն հրամանի:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ

ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը:

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ

թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:
- գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

7 հոկտեմբերի 2024թ.
«ԱՈՒԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

Արսեն Խաչատրյան
Տնօրեն

Ավետ Ավետիսյան
Աուդիտոր

Կազմված է 06.02.2019թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՏԱԶԳՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«31» 01 . 2019թ.

ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

ՆԱԶԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈԼԵԳԻԱՅԻ ԹԻՎ 22/17 ՈՐՈՇՄԱՄԲ
13. 05.1993թ.
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ
01820284
ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԱԾ Է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
23.02.2004թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.171.02454
23.02.2004թ. ԳՐԱՆՑՎԱԾ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ 001-2
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԱԾ Է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

« » 2019թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՏԱԶԳՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

2019թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ***«Հայաստանի նետաձգության ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը*** (այսուհետ՝ Կազմակերպություն), Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպությունը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամների շահերի ընդհանրությունը, անդամության կամավորությունը, ինքնակառավարումը, հաշվետվողականությունը:

1.4. Կազմակերպությունը գործում է ՀՀ ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5. Կազմակերպությունը չունի անդամության սահմանափակում:

1.6. Կազմակերպությունը գործում է առանց ժամկետի սահմանափակման (անժամկետ.):

1.7. Կազմակերպության անվանումն է՝
Հայերեն լրիվ՝ ***«Հայաստանի նետաձգության ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն,***

1.8 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, քաղաք Երևան, Աբովյան փողոց, 9 շենք:

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է՝

2.1.1. Նետաձգության զարգացումը Հայաստանում, առողջ ապրելակերպի համակարգում մարզաձևի տեսակարար կշռի մեծացումը, մարզաձևի տարածմանը նպաստող ձևերի կատարելագործումը:

2.1.2. Նետաձգության մրցումների կազմակերպումը և անցկացումը:

2.1.3. Բարձրակարգ մարզիկների և նրանց փոխարինողների պատրաստման մեթոդների կատարելագործումը, Օլիմպիական խաղերի, Աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, ինչպես նաև միջազգային մրցումներին կազմակերպության մարզիկների մասնակցության ապահովումը:

2.1.4. Ռեգիոնալ, հանրապետական, արտասահմանյան և միջազգային մարզական կազմակերպությունների /կազմակերպություններ, ակումբներ, ֆիրմաներ և այլ կազմակերպություններ/ հետ մարզական կապերի հաստատումը և համագործակցումը:

2.1.5. Նետաձգության մասնագետների որակավորման բարձրացումը:

2.1.6. Մրցումների մասնակցության և անցկացման կանոնակարգի հաստատումը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Օրենքով սահմանված կարգով կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ (ինչպես նաև Կազմակերպության անդամ դառնալու իրավունք ունեցող իրավաբանական անձ), որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է կազմակերպության կանոնադրությունը:

3.2. Մինչև տասնչորս տարեկան անձը Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

3.3. Կազմակերպության հիմնադիրները Կազմակերպության պետական գրանցումից հետո օրենքի ուժով համարվում են Կազմակերպության անդամներ:

3.4. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ):

3.5. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող իրավաբանական անձը իր իրավասու մարմնի որոշումը ներկայացնում է Խորհրդին:

3.6. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Խորհուրդը:

3.7. Անդամակցության դիմումը մերժելու դեպքում խորհրդի կողմից դիմումատուին ուղարկվում է գրավոր պատճառաբանված մերժում:

3.8. Կազմակերպությանն անդամագրված անձը կարող է ցանկացած ժամանակ դուրս գալ Կազմակերպությունից՝ այդ մասին գրավոր դիմում (իրավաբանական անձի դեպքում՝ իրավասու մարմնի որոշում) ներկայացնելով Խորհրդին: Կազմակերպության անդամությունից հեռացումը տեղի է ունենում Խորհրդի որոշմամբ:

3.9. Կազմակերպության այն անդամը, որը պարբերաբար խախտում է սույն կանոնադրության դրույթները կամ չի կատարում Կազմակերպության ղեկավար մարմինների պարտադիր կատարման ենթակա որոշումները՝ Խորհրդի որոշմամբ հեռացվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

4.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպության ցանկացած անդամ իրավունք ունի՝

4.1.1. Ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման և վերահսկողություն իրականացնող մարմիններում:

4.1.2. Ներկա լինել Ընդհանուր ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով կամ Կազմակերպության Խորհրդի նիստերին:

4.1.3. Խորհրդի որոշմամբ, անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից:

4.1.4. Ծանոթանալ Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները:

4.1.5. Կազմակերպության մարմինների որոշումները բողոքարկել Ընդհանուր ժողովին: Ընդհանուր ժողովի որոշումը, որն ընդունվել է օրենքի կամ Կազմակերպության

կանոնադրության խախտմամբ կամ ոտնահարել է Կազմակերպության կամ նրա մասնակցի (անդամի) իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Կազմակերպության կամ մասնակցի (անդամի) դիմումի հիման վրա: Դիմումը կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

4.1.6. Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին:

4.1.7. Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ:

4.1.8. Ներկա գտնվել կազմակերպության Ընդհանուր ժողովին, եթե վերջինս անցկացվում է կազմակերպության անդամների պատվիրակների կազմով, իսկ ինքը պատվիրակ չի ընտրվել:

4.1.9. Ծանոթանալ կազմակերպության մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները (պատճենների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող գերազանցել դրանց պատրաստման համար անհրաժեշտ ծախսերը).

4.1.10. Սպառիչ տեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին:

4.1.11. Ազատ դուրս գալ Կազմակերպությունից:

4.1.12. Մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին:

4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

4.2.1. Հոգ տանել կազմակերպության հեղինակության մասին:

4.2.2. Կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, կառավարման մարմինների որոշումները:

4.2.3. Բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

4.2.4. Վճարել անդամավճարները, խորհրդի կողմից սահմանված կարգով և չափով:

4.3. Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության, խիստ նկատողություն կամ Կազմակերպության անդամությունից զրկում:

4.4. Կազմակերպության անչափահաս անդամների իրավունքների և պարտականությունների առանձնահատկություններ չեն նախատեսվում: Կազմակերպության անչափահաս անդամներն ունեն սույն կանոնադրությամբ Կազմակերպության անդամի համար ամրագրված նույն իրավունքները, բացառությամբ ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի, ինչպես նաև կրում են Կազմակերպության անդամի համար սույն կանոնադրությամբ ամրագրված պարտականությունները:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1. Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

5.2. Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, իր անվանման հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք՝ խորհրդանիշով, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով: Կազմակերպությունը կարող է ունենալ խորհրդանիշ:

5.3. Կազմակերպությունը, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

5.3.1. Իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5.3.2. Բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

5.3.3. Ստեղծել այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից:

5.3.4. Ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ:

5.3.5. Տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին:

5.3.6. Կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ:

5.3.7. օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր անդամների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

5.3.8. Համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել Կազմակերպություն կամ անդամակցել նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը:

5.3.9. Կազմակերպությունն իրավունք ունի սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինել իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

5.3.10. Կատարել օրենքով չարգելված այլ գործողություն:

5.4. Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան՝ իր աշխատանքներում ներգրավել կամավորների: Կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի

Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը այնքանով, որքանով այդ կարգավորումները չեն հակասում սույն օրենքին: Եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պարտավոր է՝

6.1.1. Վարել իր անդամների և կամավորների հաշվառումը:

6.1.2. Եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է հինգ միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի՝ Կազմակերպության Ընդհանուր ժողովի ընտրած անկախ աուդիտորի կողմից:

6.1.3. Պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը:

6.1.4. Օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր:

6.1.5. Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, Ընդհանուր ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը:

6.1.6. Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

6.1.7. Իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության Գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը:

6.1.8. Եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցները), ապա Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, Կազմակերպությունների կողմից հրապարակվող

հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել օրենքով նախատեսված հաշվետվությունը:

6.1.9. Եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր չեն հանդիսացել օրենքով նախատեսված հանրային միջոցները, Կազմակերպությունն իրավունք ունի Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակելու ինչպես 6.1.8. կետով նախատեսված հաշվետվությունը, այնպես էլ իր գործունեության ցանկացած արդյունքի վերաբերյալ տեղեկություններ կամ նյութեր: Կազմակերպության հաշվետվությունը պահպանվում է հինգ տարուց ոչ պակաս ժամկետով:

6.1.10. Կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6.2. Կազմակերպության մարմինները նրա անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Կազմակերպության:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուրներ կարող են լինել՝

7.1.1. Կազմակերպության անդամների ներդրումները:

7.1.2. Կազմակերպության անդամների վճարումները (անդամավճարները):

7.1.3. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները:

7.1.4. Իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցները:

7.1.5. Դրամական մուտքերը պետական բյուջեից:

7.1.6. Նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները:

7.1.7. Հանգանակությունները:

7.1.8. Օրենքով չարգելված այլ միջոցներ:

7.2. Կազմակերպության հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Կազմակերպության սեփականությունն է:

7.3. Կազմակերպությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

7.4. Կազմակերպության հիմնադիրները և անդամները կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարները) նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը՝ իր հիմնադիրների և անդամների պարտավորությունների համար:

7.5. Կազմակերպության գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրների և անդամների միջև:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆԸ

8.1. Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինը Կազմակերպության Ընդհանուր ժողովն է:

8.2. Կազմակերպության այլ կոլեգիալ կառավարման մարմինը Կազմակերպության Խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

8.3. Կազմակերպության Գործադիր մարմինը Կազմակերպության Նախագահն է:

8.4. Կազմակերպության վերստուգող մարմինը Կազմակերպության Վերստուգիչ Հանձնաժողովն (Վերստուգողն) է:

<u>Կազմակերպության Ընդհանուր ժողովը.</u>

8.5. Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Ընդհանուր ժողովին:

8.6. Ընդհանուր ժողովը հրավիրվում է հինգ տարին մեկ անգամ, մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն կամ փոխանակելով փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է նրանում որպես հեղինակ նշված անձից: Ընդհանուր ժողովի օրակարգի, նրա աշխատանքի ժամանակի և վայրի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ Խորհրդի կողմից որոշված այլ եղանակով՝ ոչ ուշ, քան Ընդհանուր ժողովի անցկացման օրվանից հինգ օր առաջ՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:

8.7. Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա Ընդհանուր ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները հետևյալ համամասնությամբ՝ մինչև 200 անդամի դեպքում՝ յուրաքանչյուր 10 անդամից մեկ պատվիրակի հաշվով, մինչև 400 անդամի դեպքում յուրաքանչյուր 20 անդամից մեկ պատվիրակ, 400 և ավելի անդամի դեպքում՝ յուրաքանչյուր 30 անդամից մեկ պատվիրակ:

8.8. Կազմակերպության արտահերթ Ընդհանուր ժողով հրավիրում է Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի, Նախագահի կամ Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) նախաձեռնությամբ Խորհրդի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով, նախաձեռնությունից ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում հերթական ընդհանուր ժողով հրավիրելու համար սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Արտահերթ Ընդհանուր ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ընդհանուր ժողովի մասնակիցները ծանուցվում են ոչ ուշ, քան արտահերթ Ընդհանուր ժողով անցկացնելու օրվանից հինգ օր առաջ:

8.9. Կազմակերպության Ընդհանուր ժողովն ունի Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք:

8.10. Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

8.10.1. Կատարել Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատել կանոնադրությունը:

8.10.2. Ստեղծել այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունել այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին:

8.10.3. Հաստատել Կազմակերպության կառուցվածքը:

8.10.4. Որոշումներ ընդունել Կազմակերպության Խորհրդի, Գործադիր մարմնի (Նախագահի), Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) ընտրության կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին:

8.10.5. Սահմանել կազմակերպության Նախագահի վարձատրության կարգը և պայմանները:

8.10.6. Ընտրել Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է հինգ միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա է պարտադիր աուդիտի:

8.10.7. Հաստատել Կազմակերպության ռազմավարությունը:

8.10.8. Հինգ տարին մեկ հաստատել Գործադիր մարմնի կողմից Ընդհանուր ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, Կազմակերպության հաշվապահական հաշվառման և Կազմակերպության կառավարման և այլ մարմինների կողմից ներկայացված հաշվետվությունները: Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները Ընդհանուր ժողովի հաստատմանն են ներկայացվում Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) եզրակացության հետ միասին:

8.10.9. Դադարեցնել Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը:

8.10.10. Ընդունել որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին:

8.10.11. Ընդունել որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի:

8.10.12. Իրականացնել օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8.11. Ընդհանուր ժողովը անցկացվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

8.11.1. Մինչև Ընդհանուր ժողովի բացումը կատարվում է անդամների կամ նրանց պատվիրակների գրանցում: Գրանցումը կազմակերպում է Ընդհանուր ժողովի նախագահը:

8.11.2. Ընդհանուր ժողովը բացվում է ծանուցման մեջ նշված ժամին կամ այդ պահին գրանցված անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ՝ ավելի ուշ:

8.11.3. Ընդհանուր ժողովը որոշումներ է ընդունում՝ կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե մասնակցել են Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների կեսից ավելին:

8.11.4. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են անդամների կամ նրանց պատվիրակների/ներկայացուցիչների բաց կամ փակ (գաղտնի) քվեարկությամբ: Քվեարկության ընթացքում յուրաքանչյուր անդամ կամ նրա ներկայացուցիչ ունի 1 ձայնի իրավունք: Ընդհանուր ժողովը որոշումներ է ընդունում, եթե ընդհանուր ժողովին

մասնակցում են կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների կեսից ավելին:

8.11.5. Եթե Ընդհանուր ժողովում քննարկվում է Ընդհանուր ժողովի որևէ մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Ընդհանուր ժողովի տվյալ մասնակիցը քվեարկությանը չի մասնակցում:

8.11.6. Օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման համար իրականացվող քվեարկության կարգը սահմանում է ընդհանուր ժողովը:

8.11.7. Ընդհանուր ժողովի ընդունած որոշումները գրանցվում են արձանագրության տեսքով, որը վարում է ընդհանուր ժողովի կողմից ընտրված քարտուղարը:

Կազմակերպության Խորհուրդը

8.12. Խորհուրդն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից հինգ տարի ժամկետով:

8.13. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության նախագահի կողմից ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, Խորհրդի երկու անդամների կամ Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) պահանջով:

8.14. Խորհուրդը՝

8.14.1. Առաջարկություններ է ներկայացնում Ընդհանուր ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ:

8.14.2. Ընդունում է Կազմակերպության անդամ և հեռացնում Կազմակերպության անդամությունից:

8.14.3. Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում են խրախուսանքներ և տույժի միջոցներ:

8.14.4. Ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում:

8.14.5. Սահմանում է Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը, որոնք հաստատվում են ժողովի կողմից:

8.14.6. Որոշումներ է ընդունում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին:

8.14.7. Որոշումներ է ընդունում Կազմակերպության անդամների կողմից Կազմակերպության ծառայություններից անվճար օգտվելու մասին:

8.14.8. Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների կեսից ավելին:

8.14.9. Խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

8.14.10. Իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ անհրաժեշտ գործողություններ:

Կազմակերպության նախագահը

8.15. Կազմակերպության նախագահը, որն ի պաշտոնե խորհրդի նախագահն է, ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով:

8.16. Գործադիր մարմնի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

8.17. Կազմակերպության նախագահը Կազմակերպության Գործադիր մարմինն է՝

8.17.1. Ապահովում է Ընդհանուր ժողովի կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների որոշումների կատարումը:

8.17.2. Ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում:

8.17.3. Առանց լիազորագրի գործում է Կազմակերության անունից, տալիս է լիազորագրեր:

8.17.4. Բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ:

8.17.5. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

8.17.6. Հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը:

8.17.7. Հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները:

8.17.8. Տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից:

8.17.9. Հաստատում է Կազմակերպության տարեկան գործունեության և գույքի օգտագործման հաշվեվությունները, հաշվապահական հաշվառման հաշվետվությունները, Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները, որոնք առնվազն հինգ տարին մեկ անգամ, Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) եզրակացության հետ միասին, ներկայացնում է Ընդհանուր ժողովի հաստատմանը:

8.17.10. Կազմակերպության նախագահը որոշումներ է կայացնում միանձնյա:

8.18. Կազմակերպության նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ընդհանուր ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

<u>Կազմակերպության Վերստուգիչ Հանձնաժողովը (Վերստուգողը.)</u>

8.19. Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովը (Վերստուգողը) ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Խորհրդի անդամները և Կազմակերպության նախագահը չեն կարող լինել Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ (Վերստուգող):

8.20. Վերստուգիչ հանձնաժողովն (Վերստուգողը) իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն 2 անգամ: Նիստ կարող է

հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամների մեկ երրորդի (Վերստուգողի), Կազմակերպության նախագահի կամ Խորհրդի պահանջով:

8.21. Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

8.22. Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե վերահսկող մարմինը Վերստուգողն է, ապա նա որոշումներ է ընդունում միանձնյա:

8.23. Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները Ընդհանուր ժողովի հաստատմանն են ներկայացվում դրանց վերաբերյալ Վերստուգող մարմնի եզրակացության հետ միասին:

8.24. Վերստուգիչ հանձնաժողովը (Վերստուգողը) իրավասու է՝

8.24.1. Տարին մեկ անցկացնելու Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում:

8.24.2. Ծանոթանալ Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնելու Կազմակերպության մարմիններին, որոնք պարտավոր են տաս աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր պատասխաններ:

8.24.3. Պահանջել և ստանալ Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

8.24.4. Իրականացնել Կազմակերպության կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9.1. Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում.) կատարվում է նրա բարձրագույն մարմնի որոշմամբ: Կազմակերպության վերակազմակերպումը դատական կարգով հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

9.2. Կազմակերպությունը կարող է միաձուլվել այլ կազմակերպության (կազմակերպությունների) հետ:

9.3. Կազմակերպությունը կարող է միանալ այլ կազմակերպության:

9.4. Կազմակերպությանը կարող է (են) միանալ այլ կազմակերպություն (կազմակերպություններ):

9.5. Կազմակերպությունը կարող է բաժանվել այլ կազմակերպությունների:

9.6. Կազմակերպությունից կարող է (են) առանձնանալ կազմակերպություն (կազմակերպություններ):

9.7. Կազմակերպությունը կարող է վերակազմավորվել հասարակական միավորման որևէ այլ կազմակերպական-իրավական տեսակի կամ հիմնադրամի:

9.8. Կազմակերպության (կազմակերպությունների) վերակազմակերպման հետևանքով նրանց կանոնադրությունների փոփոխությունները և (կամ) լրացումները կամ գործունեության

դադարումը, ինչպես նաև նոր ստեղծված իրավաբանական անձինք պետական գրանցում են ստանում օրենքով սահմանված կարգով:

9.9. Կազմակերպության գործունեությունը կարող է որոշակի ժամկետով կասեցվել դատարանի որոշմամբ՝ Լիազոր մարմնի դիմումի հիման վրա՝ օրենքով սահմանված կարգով:

9.10. Կազմակերպության լուծարումը հանգեցնում է նրա գործունեության դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցվելու: Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, նրա գործունեության դադարման պետական գրանցման պահից:

9.11. Կազմակերպությունը կարող է կամավոր լուծարվել իր բարձրագույն մարմնի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է Կազմակերպությունը, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար նա ստեղծվել է:

9.12. Կազմակերպության հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ պետական լիազորված մարմնի պահանջով և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

9.13. Կազմակերպության լուծարումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման՝ օրենքով սահմանված կարգով և պայմաններով:

9.14. Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

9.15. Կազմակերպության լուծարման մասին կազմակերպության բարձրագույն մարմնի որոշումը, կազմակերպության այլ մարմինների ու լուծարման հանձնաժողովի՝ լուծարման գործընթացին վերաբերող որոշումները, դրանք կայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դատարան բողոքարկելու իրավունք ունի կազմակերպության ցանկացած անդամ: Այդ դեպքում դատարանը կարող է իր որոշմամբ կասեցնել վիճարկվող որոշման կատարման ընթացքը՝ մինչև գործի դատական քննության ավարտը:

9.16. Կազմակերպության լուծարման պետական գրանցումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգով:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 08.10.2024 18:03